ԵՍ ԵՄ ՃԱՆԱՊԱՐՀԸ, ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿՅԱՆՔԸ

- *Հովհաննես 1-12 գլուխներն ընդգրկում են Հիսուսի հանրային ծառայության երեք տարիները, իսկ հաջորդ յոթ գլուխները (13-19) ընդգրկում են Նրա կյանքի միայն 24-36 ժամերը:*
- *Գլուխ 13-17-ը հայտնի է որպես «վերնատան դիսկուրս»:*

  Հովհաննես 14-ը իրականում տեղի է ունեցել վերնատանը: Թեման Հիսուսի վերջին խոսքերն են ուղված Իր աշակերտներին մխիթարելու և նախապատրաստելու գալիք փորձությանը: 14-րդ գլխում Հիսուսն ասում է Իր աշակերտներին, որ չանհանգստանան, որովհետև Նա կթողնի նրանց: Նա պատրաստվում է նրանց համար տեղ պատրաստել ու դարձեալ կվերադառնա: Նրանք դեռ չեն հասկանում, թե ինչ է ուզում ասել, և դեռ պայքարում են այն մտքի շուրջ, որ Նրան «կմատնեն և կխաչեն»: Հիսուսն ասում է նրանց, որ Նա է միակ ճանապարհը դեպի Հայրը, և որ Նա կուղարկի Սուրբ Հոգին նրանց որպեսզի նրանք մխիթարվեն:

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐ. ՀՈՎ. 14.1-14

*1 Ձեր սրտերը թող չխռովվեն. հավատացեք Աստծուն, հավատացեք նաև ինձ: 2 Իմ Հոր տանը շատ
բնակարաններ կան: Եթե ոչ, ես ձեզ կասեի: Ես գնում եմ ձեզ համար տեղ պատրաստելու: 3 Եվ երբ
գնամ ու ձեզ համար տեղ պատրաստեմ, դարձեալ կգամ ու ձեզ ինձ մոտ կվերցնեմ, որպեսզի որտեղ
ես եմ, դուք էլ լինեք: 4 Եվ ուր ես գնում եմ, գիտեք, գիտեք նաև ճանապարհը: 5 Թովմասը նրան ասաց.
Տեր, մենք չգիտենք, թե ո՞ւր ես գնում, արդ ճանապարհն ինչպե՞ս կարող ենք իմանալ: 6 Հիսուսը նրան
ասաց. Ես եմ ճանապարհը, ճշմարտությունն ու կյանքը. ոչ ոք Հոր մոտ չի գա, եթե ոչ իմ միջոցով: 7
Եթե ինձ ճանաչեիք, իմ Հորն էլ ճանաչած կլինեիք: Բայց այսուհետև ճանաչեցիք նրան և տեսաքե: 8
Փիլիպպոսը նրան ասաց. Տեր, ցո՛ւյց տուր մեզ Հորը, և դա մեզ բավական է: 9 Հիսուսը նրան ասաց.
Այսքան ժամանակ ձեզ հետ եմ, և ինձ չճանաչեցի՞ր, Փիլիպպո՛ս: Ով ինձ տեսավ, նա Հորը տեսավ. իսկ
դու ինչպե՞ս ես ասում. "Ցո՛ւյց տուր մեզ Հորը": 10 Չե՞ս հավատում, որ ես Հոր մեջ եմ, և Հայրն էլ իմ մեջ
է: Այն խոսքերը, որ ես ձեզ ասում եմ, ինքս ինձնից չեմ ասում, այլ Հայրը, որ իմ մեջ է, նա է գործերը
կատարում: 11 Հավատացեք ինձ, որ ես Հոր մեջ եմ, և Հայրն էլ իմ մեջ է. եթե ոչ, գոնե գործերի համա՛ր
հավատացեք ինձ: 12 Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ. ով հավատում է ինձ, ինքն էլ նույն գործերը
կանի, որ ես եմ անում, և դրանցից էլ ավելի մեծ բաներ կանի, որովհետև ես իմ Հոր մոտ եմ գնում: 13
Եվ ինչ որ իմ անունով խնդրեք, կանեմ, որպեսզի Հայրը Որդու միջոցով փառավորվի: 14 Եթե իմ
անունով որևէ բան խնդրեք, ես այն կկատարեմ:*

- ***Մենք լուսաբանեցինք այս հատվածները՝ ընդգծելով Հիսուսի կողմից արված վեց առանձին հայտարարություններ:***

I. <u>ՁԵՐ</u> ՍՐՏԵՐԸ ԹՈՂ ՉԽՌՈՎՎԵՆ:

1 Ձեր սրտերը թող չխռովվեն. հավատացեք Աստծուն, հավատացեք նաև ինձ:

> *Հով. 14.27 – Խաղաղություն եմ թողնում ձեզ, իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ. ես այն ձեզ չեմ տալիս, ինչպես աշխարհն է տալիս. ձեր սիրտը թող **<u>չխռովվի ու չվախենա</u>:***
>
> ***(Deiliaō) <u>չվախենա</u> – քաջության կամ վստահության պակաս.***

- ***Աստծուն վստահելը և Հիսուսին ապավինելը փոխում է մեր անհանգիստ սրտերը:***

II. ԵՍ ԳՆՈՒՄ ԵՄ ԶԵԶ ՀԱՄԱՐ ՏԵՂ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ:

2 Իմ Հոր տանը շատ բնակարաններ կան:

- ***Այստեղ մենք տուն ենք պատրաստում Քրիստոսի համար մեր սրտերում, և Հիսուսը մեզ համար տուն է պատրաստում այնտեղ՝ երկնքում:***

  Մարկոս 14.6 – Աշակերտները գնացին քաղաք ու ամեն ինչ գտան այնպես, ինչպես իրենց ասել էր Հիսուսը, և պատրաստեցին զատկական ընթրիքը:

- ***Ինչպե՞ս է հարսանիքների հին հրեական ավանդույթի ըմբռնումն օգնում մեզ հասկանալու այս հայտարարությունը:***

  ՀՐԵԱԿԱՆ ՀԱՐՍԱՆԻՔԸ

  - *Ketubah, Նշանդրեք, գնման գինը; Հարսը՝ սրբված զատվում է.*
  - *Փեսան մեկնում է Հոր տուն. Պատրաստում է սենյակ. Հարսը պատրաստվում է փեսայի անմիջական վերադարձին:*
  - *Անսպասելի հավաքույթ. Huppah, հարսանիքը:*
  - *Յոթօրյա ամուսնության ընթրիք.*

  ԵԿԵՂԵՑԻՆ ՈՐՊԵՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՐՍԸ

  - *Ուխտը՝ կնքված (Ա կորն. 11:25)*
  - *Գինը՝ վճարված (Ա կորն. 6:19-20)*
  - *Հարսը՝ զատված (Եփ. 5:25-27, Ա Կորն. 6:11, Եբր. 10:10, 13:12)*

III. ԴԱՐՁԵԱԼ ԿԳԱՄ ՈՒ ԶԵԶ ԻՆՁ ՄՈՏ ԿՎԵՐՑՆԵՄ:

- ***Պողոս առաքյալը և Պետրոսը քննարկում են վերջին օրերի երկու տարբեր իրադարձություններ:***

  Այն մեզ հիշեցնում է մարդկանց ապրելակերպի մասին

  Բ Տիմոթեոսին 3.1-5 – Իմացի՛ր սա. վերջին օրերին չար ժամանակներ կգան, որովհետև մարդիկ կլինեն եսասեր, արծաթասեր, ամբարտավան, հպարտ, հայհոյող, ծնողներին անհնազանդ, ապերախտ, անմաքուր, անգութ, անհաշտ, բանսարկու, անժուժկալ, դաժան, անբարեսեր, մատնիչ, հանդուգն, մեծամիտ, ավելի հաճոյասեր, քան աստվածասեր: Նրանք արտաքուստ աստվածապաշտ են, բայց աստվածապաշտության զորությունն ուրացել են. նրանցից խուսափի՛ր:

Վերջին օրվա եկեղեցու խոստումը.

Գործք Առաքելոց 2.17-19 – Եվ վերջին օրերին,- ասում է Աստված, իմ Հոգուց կ՚թափեմ ամեն մարմնի վրա, և ձեր որդիներն ու դուստրերը պիտի մարգարեանան. ձեր երիտասարդները տեսիլքներ, իսկ ձեր ծերերը երազներ պիտի տեսնեն: Եվ իմ ծառաների ու աղախինների վրա ևս այդ օրերին իմ Հոգուց պիտի թափեմ, և պիտի մարգարեանան: Եվ պիտի ցույց տամ հրաշքներ վերը՝ երկնքում, և նշաններ՝ ներքևում՝ երկրի վրա.

- ***Աստված չի գալիս անմաքուր և պարտված եկեղեցու հետևից, այլ գալիս է Իր հարսնացուի համար՝ արդարացված, սրբացված և փառավորված Իր արյունով:***

5 Թովմասը նրան ասաց. Տե՛ր, մենք չգիտենք, թե ո՛ւր ես գնում, արդ ճանապարհն ինչպե՞ս կարող ենք իմանալ:

IV. ԵՍ ԵՄ ՃԱՆԱՊԱՐՀԸ, ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿՅԱՆՔԸ:

- ***Վաղ եկեղեցին կոչվել է «ՃԱՆԱՊԱՐՀԻ ՄԱՐԴԻԿ».***

Գործ. 22.4 - Որ այս ճանապարհը հալածեցի մինչեւ ի մահ. Որ մարդկանց եւ կանանց կապում էի եւ մատնում բանտերի մէջ:

Գործք Առաքելոց 16.17 – Նա, Պողոսի և մեր հետևից ընկած, աղաղակում էր ու ասում. Այս մարդիկ Բարձրյալ Աստծու ծառաներն են, որոնք ձեզ փրկության ճանապարհն են հայտնում:

Գործք Առաքելոց 24.14 – Բայց սա եմ քեզ խոստովանում, որ համաձայն այն ճանապարհի, որին "հերձված" են կոչում, այդպե՛ս եմ պաշտում մեր հայրերի Աստծուն՝ հավատալով այն ամենին, ինչ գրված է օրենքում և մարգարեների մեջ:

8 Փիլիպպոսը նրան ասաց. Տե՛ր, ցո՛ւյց տուր մեզ Հորը, և դա մեզ բավական է:

V. ՈՎ ԻՆՁ ՏԵՍԱՎ, ՆԱ ՀՈՐԸ ՏԵՍԱՎ:

- ***Սուրբ Երրորդությունը հասկանալը կարևոր է: Եթե այն չհասկանաք, Աստվածաշնչի որոշ տողեր կարող են շփոթեցուցիչ լինել:***

Եսայի 7.14 – Դրա համար էլ Տէրն ինքը ձեզ նշան է տալու: Ահա կոյսը պիտի յղիանայ ու որդի ծնի, եւ նրա անունը պիտի լինի Էմմանուէլ.

Էմմանուէլ նշանակում է Աստված մեզ հետ է (Էմմ=հետ, ման=մեզ, ուէլ=Աստված)

VI. ԵԹԵ ԻՄ ԱՆՈՒՆՈՎ ՈՐԵԷ ԲԱՆ ԽՆԴՐԵՔ, ԵՍ ԱՅՆ ԿԿԱՏԱՐԵՄ:

Եվ ինչ որ իմ անունով խնդրեք, կանեմ, որպեսզի Հայրը Որդու միջոցով փառավորվի:

- ***«Խնդրել» բառը հոգնակի է և ոչ եզակի: Ըստ էության, Հիսուսն ասում է, որ Իր եկեղեցին կիրականացնի ավետարանի քարոզչությունը մարդկային բոլոր խմբերին:***

  12 Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ. ով հավատում է ինձ, ինքն էլ նույն գործերը կանի, որ ես եմ անում, և դրանցից էլ ավելի մեծ բաներ կանի, որովհետև ես իմ Հոր մոտ եմ գնում:

- ***Այս շաբաթ ես տեսանյութ կտեղադրեմ մեր խմբի Telegram-ում, և դուք կարող եք տեսնել երեք վկայություն այն մասին, թե ինչպես է Աստված պատասխանել աղոթքներին երեք տարբեր ձևերով:***

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ